Պատմություն և մշակույթ 2025 № 22 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.2.122

The Issue of Iran-Russia Military-Technical Cooperation During the Presidency of Ali Akbar Hashemi Rafsanjani (1989–1997)

Davit Barseghyan
https://orcid.org/0009-0004-8160-8436
Institute of Oriental Studies, National Academy of Sciences of Armenia, PhD Student
davit.barseghyan.98@mail.ru

Keywords: Iran, Russia, Rafsanjani, military-technical cooperation, realism, interdependence, constructivism, world order.

The study explores the evolution of military-technical cooperation between Iran and Russia during the presidency of Ali Akbar Hashemi Rafsanjani (1989–1997), a crucial stage in Iran's foreign policy and defense reconstruction. It examines the political and strategic foundations of bilateral cooperation, Russia's role in the modernization of Iran's military potential, and Rafsanjani's pragmatic approach toward foreign policy realignment. The analysis draws upon both open and declassified sources, incorporating political, technological, and geopolitical dimensions. The research problem of this article is to determine what combination of political, security, and international factors shaped Iran-Russia military-technical cooperation during the presidency of Ali Akbar Hashemi Rafsanjani (1989–1997).

The methodological framework combines the perspectives of political realism, dependency and interdependence theory, and constructivism. This interdisciplinary approach allows for understanding how military and economic asymmetry transformed into a pragmatic, mutually beneficial partnership while preserving the regional balance of power.

Scientific novelty lies in conceptualizing Iran–Russia military-technical cooperation as a model of pragmatic interdependence, where realist calculations intertwine with the pursuit of technological autonomy and identity politics.

Իրան-Ռուսաստան ռազմատեխնիկական համագործակցության հարցը Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության շրջանում (1989-1997)

History and Culture Vol.-22(2), 2025, pp. 122-133.

Received: 12.09.2025
Revised: 12.10.2025
Accepted: 22.11.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Դավիթ Բարսեղյան
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, հայցորդ

Հիմնաբառեր՝ Իրան, Ռուսաստան, Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանի, ռազմատեխնիկական համագործակցություն, ռեալիզմ, փոխկախվածություն, կոնստրուկտիվիզմ, աշխարհակարգ:

Ներկայացված ուսումնասիրությունը վերաբերում է Իրանի ու Ռուսաստանի ռազմատեխնիկական համագործակցության ձևավորման ու զարգացման գործընթացին Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության (1989-1997) շրջանում: Այս ժամանակահատվածը դիտարկվում է որպես Իրանի արտաքին քաղաքականության ու պաշտպանական համակարգի վերակառուցման առանցքային փուլ: Աշխատանքը վերլուծում է համագործակցության հիմնարար գործոնները, Ռուսաստանի դերը Իրանի ռազմական ներուժի ամրապնդման գործում ու Ռաֆսանջանիի քաղաքականության պրագմատիկ բնույթը: Ուսումնասիրությունը հիմնված է բաց ու գաղտնազերծված աղբյուրների համադրական վերլուծության վրա՝ ներառելով քաղաքական, տեխնոլոգիական ու աշխարհաքաղաքական բաղադրիչներ: Սույն հոդվածի հետազոտական հիմնախնդիրը պարզելն է, թե ինչպիսի քաղաքական, անվտանգային ու միջազգային գործոնների համադրությամբ է ձևավորվել Իրան-Ռուսաստան ռազմատեխնիկական համագործակցությունը Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության շրջանում (1989-1997):

Մեթոդաբանական հիմքը ձևավորվում է պատմահամեմատական, համադրական, ինչպես նաև միջազգային հարաբերությունների մի քանի տեսությունների՝ քաղաքական ռեալիզմի, կախվածության ու փոխկախվածության համադրմամբ և կոնստրուկտիվիզմի մոտեցումներով: Այս տեսությունների համատեղ կիրառումը թույլ է տալիս բացատրել, թե ինչպես է ռազմական անհավասարությունն ու տնտեսական կախվածությունը վերածվել փոխշահավետ գործընկերության՝ պահպանելով ուժային հավասարակշռությունը տարածաշրջանում:

Գիտական նորույթն *այն է, որ Իրանի ու Ռուսաստանի ռազմատեխնիկական համագործակցությունը առաջին անգամ դիտարկվում է որպես* ***պրագմատիկ փոխկախվածության մոդել****, որում քաղաքական ռեալիզմը միահյուսվում է տեխնոլոգիական ինքնուրույնության ձգտմանն ու ինքնության քաղաքականության ձևավորմանը:*

Вопрос военно-технического сотрудничества Ирана и России в период президентства Али Акбара Хашеми Рафсанджани (1989-1997)

Давит Барсегян

Соискатель Института востоковедения Национальной академии наук Армении

The Issue of Iran-Russia Military-Technical Cooperation During the Presidency of Ali Akbar Hashemi Rafsanjani (1989–1997)

Իրան-Ռուսաստան ռազմատեխնիկական համագործակցության հարցը Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության շրջանում (1989-1997)

Ключевые слова: Иран, Россия, Рафсанджани, военно-техническое сотрудничество, реализм, взаимозависимость, конструктивизм, мировой порядок.

Исследование посвящено развитию ирано-российского военно-технического сотрудничества в период президентства Али Акбара Хашеми Рафсанджани (1989–1997 гг.), который стал ключевым этапом в перестройке внешней и оборонной политики Ирана. Анализируются политические и стратегические предпосылки взаимодействия, роль России в модернизации военного потенциала Ирана и прагматический характер внешнеполитической линии Рафсанджани. Работа основана на сопоставлении открытых и рассекреченных источников, она охватывает политические, технологические и геополитические аспекты. Целью данной статьи является выявление сочетания политических факторов, факторов безопасности и международных факторов, которые сформировали военно-техническое сотрудничество между Ираном и Россией в период президентства Али Акбара Хашеми Рафсанджани (1989–1997).

Методологическая основа включает в себя сочетание политического реализма, теорий зависимости и взаимозависимости, а также конструктивизма. Такой подход позволяет объяснить, каким образом военное и экономическое неравенство превратилось в прагматическое взаимовыгодное партнёрство, обеспечившее сохранение баланса сил в регионе.

Научная новизна заключается в том, что ирано-российское военно-техническое сотрудничество впервые интерпретируется как модель прагматической взаимозависимости, в которой реалистические расчёты переплетаются ***со*** *стремлением к технологической автономии и к политике идентичности.*

* * *

Ներածություն: Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության ժամանակաշրջանը (1989-1997) Իրանի արտաքին քաղաքականության ու ռազմական զարգացման առանցքային փուլ է [Shireen T. Hunter, 2010, 125]: Այս ժամանակաշրջանում Իրանը, գտնվելով Իրան-Իրաք պատերազմի (1980-1988 թթ.) հետևանքներից վերականգնման փուլում, ձգտում էր արդիականացնել իր ռազմական ներուժը: Չնայած Իրան-Ռուսաստան հարաբերություններին նվիրված ուսումնասիրությունների առկայությանը՝ դրանց ռազմատեխնիկական բաղադրիչը հաճախ դիտարկվում է առանց ներքաղաքական գործոնների ու քաղաքական դերակատարների ազդեցության ամբողջական հաշվառման:

Սույն հոդվածը անդրադառնում է նշված խնդրին՝ կիրառելով պատմաքաղաքական ու միջազգային հարաբերությունների վերլուծական մոտեցումների համադրություն:

Իրաքի հետ ութամյա պատերազմի ավարտը սկիզբ դրեց Իրանի անվտանգային ու քաղաքական համակարգերի վերափոխմանը: Պատերազմը խորը հետք էր թողել երկրի տնտեսության, կառավարման կառուցվածքի ու հասարակական հոգեբանության վրա: Արտաքին մեկուսացումը, տնտեսական անկայունությունն ու ներքին քաղաքական բևեռացումը ստեղծեցին այնպիսի

իրավիճակ, երբ պետությունը կարիք ուներ ռազմավարական ուղղության վերանայման: Այդ պայմաններում Իրանի քաղաքական վերնախավի ներսում հասունանում էր այն տեսակետը, որ պետությունը կարիք ունի նոր մոտեցման՝ հիմնված տնտեսական վերականգնման, տեխնոլոգիական զարգացման ու արտաքին քաղաքական պրագմատիզմի վրա: **Այս իրավիճակն էլ նախադրյալ դարձավ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի քաղաքական իշխանության վերելքի համար**, ինչն էլ 1980-ական թթ. վերջում նշանավորեց Իրանի անցումը պատերազմական մոբիլիզացիայից դեպի ինստիտուցիոնալ կառավարման ու զարգացման նոր փուլ:

1980-ական թթ. վերջին Ռաֆսանջանիին լայն աջակցությունը Իրանի քաղաքական վերնախավի շրջանում մի քանի պատճառներ ուներ: Մինչ այդ Մեջլիսի խոսնակը փորձեց ստանձնել քաղաքական էլիտայի միակ առաջնորդի դերը, որը կարող էր երկիրը դուրս բերել Իրաքի դեմ երկարատև հակամարտության հետևանքով առաջացած տնտեսական ու սոցիալական ճգնաժամից: Երբ 1988 թ. վերջին ավարտվեց նախագահ Ալի Խամենեիի երկրորդ մանդատը, Իրանի քաղաքական վերնախավում ձևավորվում էր ընդհանուր համաձայնություն նրան մինչ այդ Մեջլիսի խոսնակ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիով փոխարինելու հարցում: Խոմեյնիի կողմից Ռաֆսանջանիին տրված անձնական մեծ աջակցությունն ու լիազորությունների աճող պատվիրակումը, այդ թվում՝ նրան զինված ուժերի փաստացի հրամանատարությունը վստահելը, 1987 թ. նույնպես բարձրացրին Ռաֆսանաջանիի հեղինակությունը: Այսպիսով՝ Հաշեմի Ռաֆսանջանին հաղթեց նախագահական ընտրություններում բոլոր ակտիվ քաղաքական խմբերի աջակցությամբ, և ձևավորեց կառավարություն՝ միտված տնտեսական շինարարության ու զարգացման[1]:

Ռաֆսանջանին իր նախագահության հենց սկզբում առաջին ուրբաթօրյա աղոթքում արված հայտարարություններով իրեն դիրքավորեց որպես բարեփոխիչ առաջնորդ, որը պետք է երկիրը դուրս բերեր սոցիալ-տնտեսական ծանր վիճակից՝ նշելով, որ այլևս անկարելի է հասարակ ժողովրդին ասել. «Սպասե՛ք ևս 10 տարի և ապրե՛ք խնայելով» [جعفرشیر علی نیا, 2016, 560]: Այս ամենը գործնականում Ռաֆսանջանին կարողացավ կյանքի կոչել պետական կառավարման համակարգում կատարված փոփոխություններով: Սահմանադրության փոփոխությամբ նախագահի՝ նախկինում ունեցած արարողակարգային դերը կտրուկ աճեց ի հաշիվ վարչապետի լիազորությունների, իսկ վերջինիս պաշտոնն ընդհանրապես վերացավ [جعفرشیر علی نیا, 2016, 554]:
Հաջորդը ԻԻՀ Սահմանադրության 99-րդ հոդվածի [Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն] այն նոր մեկնաբանությունն էր, ըստ որի՝ Սահմանադրության պահապանների խորհուրդը ստանում էր հաստատող վերահսկողություն («نظارت استصوابی»), ինչը նշանակում էր, որ բոլոր թեկնածուները պետք է ընդունվեն Խորհրդի կողմից՝ անկախ Ներքին գործերի նախարարության թույլտվությունից [Mehdi Moslem, 2002, 160]: Փոփոխվեց նաև դատական համակարգի կառուցվածքը. նախկին բարձրագույն դատական խորհուրդը փոխարինվեց միանձնյա կառավարմամբ, որի ղեկավարը նշանակվում էր ռահբարի կողմից 5 տարի ժամկետով [Saïd Amir Arjomand, 2009, 40]:

[1] Նախագահական ընտրություններին զուգահեռ անցկացվեց նաև նոր սահմանադրության հանրաքվե: Հաշեմի Ռաֆսանջանին կատարյալ հաղթանակ տարավ աջ թևի չափավոր գործիչ Աբբաս Շեյբանիի նկատմամբ: Ռաֆսանջանին ստացավ ձայների 94.38 %-ը, իսկ 97 %-ը դրական արձագանքեց սահմանադրության փոփոխությանը:

1992 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ, երբ 270 տեղերի համար պայքարում էին 3240 հավանական թեկնածուներ, Ռաֆսանջանին, օգտագործելով իր ազդեցությունը, կարողացավ հասնել նրան, որ Սահմանադրության պահապանների խորհուրդը չհաստատի այն անձանց թեկնածությունը, որոնք, ըստ նրա, արմատական կամ ծայրահեղականներ էին: Ընտրությունների արդյունքում Ռաֆսանաջանիի քաղաքական գծի կողմնակիցները խորհրդարանում ստացան պարզ մեծամասնություն: Կոշտ գծի կողմնակիցները, նրանց թվում՝ Մեհդի Քարուբին, Ալի Աքբար Մոհթաշեմին, կորցրին իրենց ուժը, և նրանց կողմնակիցներին փոխարինելու եկան Ռաֆսանջանիի տեխնոկրատ գործիչները՝ Հոսեյն Մարաշին, Ահմադ Խորրամը և այլք [Siavush Randjbar-Daemi, 2012, 103]:

Այսպես, սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հաշեմի Ռաֆսանջանին ստացավ գործադիր լիազորություններ՝ անհրաժեշտ արտաքին համաձայնագրեր կնքելու, այդ թվում՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները համակարգային մակարդակով ամրապնդելու համար: Ներքաղաքական փոփոխությունների արդյունքում ձևավորված նոր գործադիր հնարավորությունները թույլ տվեցին անցնել արտաքին ռազմատեխնիկական համագործակցության գործնական իրականացմանը:

Ռուսական զինտեխնիկան Իրանի զինված ուժերում: ԽՍՀՄ-ի ու ԻԻՀ-ի միջև հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը ազդող գործոնները պայմանավորված էին ինչպես այս երկու երկրի ներքին իրավիճակի առանձնահատկություններով, այնպես էլ արտաքին քաղաքական իրողություններով: Սրանց թվում էին նաև խորհրդային զորքերի ներխուժումը Աֆղանստան, իրան-իրաքյան պատերազմում ԽՍՀՄ-ի կողմից Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնին (1979 – 2003 թթ.) օժանդակելը և այլն: Բացի դրանից՝ Իրանի նոր առաջնորդները քննադատաբար էին տրամադրված մեծ տերությունների, մասնավորապես՝ Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի ու ԽՍՀՄ-ի նկատմամբ: Սակայն ավելի ուշ ԽՍՀՄ ղեկավար Մ. Գորբաչովի «Վերակառուցման» քաղաքականությունը, Խորհրդային զորքերի Աֆղանստանից դուրսբերումը, իրան-իրաքյան պատերազմի ավարտը նախադրյալներ ստեղծեցին երկու երկրների միջև հարաբերությունների բարելավման համար [Махдиян Мохаммад Хасан, 2014, 89]:

Իրանի ու Ռուսաստանի միջև ռազմատեխնիկական համագործակցությունը սկսվել է դեռևս խորհրդային տարիներին [Минасян С. М. История и перспективы российско-иранского военно-политического сотрудничества][1]: Սակայն երկու երկրների ռազմատեխնիկական համագործակցության զարգացման նոր փուլ դարձավ Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի 1989 թ. Մոսկվա այցը [Los Angeles Times, Iranian Gets Warm Soviet Welcome: Rafsanjani-Gorbachev Talks Point to Improved Relations]: Նա ու Մ. Գորբաչովը ստորագրեցին ԽՍՀՄ-ի ու Իրանի Իսլամական Հանրապետության միջև հարաբերությունների և

[1] Նշենք, որ Իրան-Իրաք պատերազմի սկզբում մոտ 500 իրանցի մասնագետ ավարտել էր ուսումը Խորհրդային Միության ռազմական համալսարաններում: 1982-1987 թթ. Իրանում կար միայն մեկ ավագ ռազմական մասնագետ: 1987-1988 թթ. Իրանում աշխատել է խորհրդային 13 սպաներից բաղկացած խումբ, իսկ հետագայում՝մինչև 1991 թվականը, ևս 141 խորհրդային ռազմական մասնագետ այցելել է Իրան:

բարեկամական համագործակցության սկզբունքների մասին հռչակագիրը: Հռչակագրում, ի թիվս այլ ոլորտների, նշվում էր նաև Իրանի պաշտպանունակության ամրապնդման ուղղությամբ ԽՍՀՄ-Իրան համագործակցության, ինչպես նաև ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման մասին [Декларация о принципах отношений и дружественного сотрудничества между Союзом Советских Социалистических Республик и Исламской Республикой Иран. 22 июня 1989 г.]:

ԽՍՀՄ փլուզման նախօրեին Մոսկվայի ու Թեհրանի միջև ստորագրվեցին միջկառավարական չորս համաձայնագրեր՝ սովորական զենքի մատակարարման վերաբերյալ: Ռուսական կողմում տվյալ գործընթացների քաղաքական ու ինստիտուցիոնալ համակարգումը իրականացվում էր նախագահ Բորիս Ելցինի վարչակազմի, պաշտպանության նախարար Պավել Գրաչովի ու ռազմարդյունաբերական արտահանման ոլորտում առանցքային դեր ունեցող «Ռոսվոորուժենիե» պետական կազմակերպության մասնակցությամբ: Որոշ տվյալներով այս ոլորտում Իրանի հետ կնքված բոլոր համաձայնագրերի ընդհանուր գումարը գնահատվում էր 7 միլիարդ դոլար: Իրանը պատրաստ էր ստորագրել նոր համաձայնագրեր՝ ավելի լայն ռազմական համագործակցության վերաբերյալ, սակայն Մոսկվան չհամարձակվեց՝ վախենալով ԱՄՆ-ի, Իսրայելի ու որոշ արաբական երկրների բացասական արձագանքից:

ԽՍՀՄ փլուզումից հետո Իրանի ու Ռուսաստանի միջև տեխնիկական ու տնտեսական կապերը կայունացան և ավելի ընդլայնվեցին: Դրան զգալի խթան հաղորդեց Ռուսաստանի կառավարության կողմից Իրանի պաշտպանունակության ամրապնդման ու ռազմական ներուժի վերականգնման գործում ամեն հնարավոր օգնություն ցուցաբերելու պատրաստակամության հաստատումը: Ռաֆսանջանիի հակառակորդ ճամբարից հնչում էին քննադատություններ, թե վերջինս շեղվել է հեղափոխական արժեքներից, իսկ կոմունիստական համակարգի փլուզումը սպառնալիք է Իրանի համար [ترور رفسنجانی در زمان بدی بود]:

Հակադարձելով ձախակողմյան քաղաքական ճամբարի դժգոհություններին՝ Ռաֆսանաջանին նշում է. «Արտաքին քաղաքականության նպատակը թշնամիներ ստեղծելը չէ, այլ թշնամիների հետ վարվել այնպես, որ կարողանաս օգտվել համաշխարհային ռեսուրսներից» [جعفرشیر علی نیا, 2016, 594]: Ինչպես նշված է ԿՀՎ զեկույցներում [US Central Intelligence Agency, Redirecting Iranian Foreign Policy], չնայած Հաշեմի Ռաֆսանջանիի ընդդիմության քննադատությունները հետաձգում և դանդաղեցնում էին որոշ ծրագրեր, այնուամենայնիվ, ի թիվս պրագմատիկ այլ որոշումների, խորհրդա-իրանական ռազմական համագործակցությունն այս փուլում հաջողված էր հատկապես, երբ կոնկրետ ռուսական կողմից տարբեր խողովակներով իրանական կողմին էին հաղորդվում, որ պատրաստ են համագործակցել Իրանի հետ բոլոր ոլորտներում, այդ թվում՝ ռազմական [WikiLeaks. (1989, June 7). Soviet reaction to Khomeini's death]:

Արևմտյան տարբեր գնահատականների համաձայն՝ միայն 1988-1992 թթ. Իրանը ներմուծել է ընդհանուր առմամբ մոտ 4,5 միլիարդ դոլարի զենք, որից 2,2 միլիարդ դոլարը՝ նախկին Խորհրդային Միությունից, 1,1 միլիարդ դոլարը՝ Չինաստանից, 0,4 միլիարդ դոլարը՝ եվրոպական երկրներից և 0,8 միլիարդ դոլարը՝ այլ երկրներից [Минасян С. М. История и перспективы российско-иранского военно- политического сотрудничества]: Այսպես, հիմքում ունենալով Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի զենքի փոխանցման տվյալների բազայում առկա տեղեկությունը [SIPRI Arms Transfers Database] ու համադրելով դրանք Զենքի համաշխարհային առևտրի վերլուծության կենտրոնի [Центр анализ мировой торговли о

ружием, Иран-Россия: Оценка втс двух стран за период с 1990 года по настоящее время.] տվյալների հետ՝ առանձնացնենք այն կոնկրետ զինատեսակները, որոնց առաքումը Իրան հաստատված են:

ԻՀՀ ցամաքային զորքերի համար: Ընդհանուր առմամբ Ռուսաստանից պատվիրված 422 T-72 տանկերից 1997 թ. դրությամբ Իրան է մատակարարվել հաստատված 147 տանկ: Այս մոդելի տանկերի հետ կապված՝ մի փոքր այլ թիվ է ներկայացնում Զենքի համաշխարհային առևտրի փորձագիտական կենտրոնը. 1993-1996 թթ. մատակարարվել է 122 T-72M1 մակնիշի տանկ: Դրանցից 100-ը մատակարարվել է 1993 թ., 20-ը՝ 1994 թ., 2-ը՝ 1996 թ.: Նշվում է նաև այս տանկերի իրանական արտադրության արտոնագիրը: Սրա հիմքի վրա Իրանը հետագայում ստեղծեց «karrar» տանկերը: Նույն թվականի դրությամբ Իրան էր մատակարարվել 220 ՀՄՄ (1989 թ. տվյալների հետ այս թիվը կազմում է 420 ՀՄՄ) վերջիններիս համար նախատեսված 800 9M111 հակատանկային՝ կառավարվող հրթիռներով, հակատանկային «фагот» տեսակի պատվիրված 5000 միավորից՝ 1250: Զրահատեխնիկայի հետ միասին իրանական կողմը ստացել է նաև անհրաժեշտ քանակի շարժիչներ, մարտական լրակազմով [Центр анализ мировой торговли оружием]:

ԻՀՀ օդուժի համար: Հատկապես հակասական են Իրանի օդուժին վերաբերող թվերը: Նախ ներկայացնենք իրանական կողմի հաստատված գնումները, ապա որոշենք դրանց նշանակալիության աստիճանը Իրանի զինված ուժերի վերակառուցման համատեքստում: Ընդհանուր առմամբ պատվիրվել է տարբեր տեսակի մոտավորապես 37 միավոր կործանիչներ, ռմբակոծիչներ, գրոհային ավիացիա: Մասնավորապես 1991թ. դրությամբ իրան էր մատակարարվել 12 միավոր Su-24, 25 միավոր MiG-29 [SIPRI Arms Transfers Database]: Մինչև 1994 թվականը Իրանի ստացած ռուսական կործանիչների թիվը հաջորդ աղբյուրի տվյալներով հետևյալն է՝ 40 միավոր MiG-29 ու 12 միավոր Su-24 [Центр анализ мировой торговли о ружием, Иран-Россия: Оценка втс двух стран за период с 1990 года по настоящее время]: Բոլոր վերոնշյալ աղբյուրները, սակայն, փաստում են՝ ինքնաթիռները ստացվել են ավիացիոն հրթիռների հետ միասին, որոնց թիվը 1000-ից ավելի է:

Այսպիսով՝ 1988-1994 թթ. ընթացքում Իրանի ռազմական ավիացիոն պարկը վերազինումից հետո տարբեր տվյալներով կազմում է 260-300 ինքնաթիռ[1]: Եթե հաշվի առնենք ռուսական կողմից ստացված հաստատված ինքնաթիռների թիվը, ապա կստացվի, որ իրանական օդուժի վերազինման առնվազն 20 %-ը կազմում են ռուսական ինքնաթիռները: Եթե ընդհանուր ինքնաթիռների թվից հանենք նաև Չինաստանից գնված ինքնաթիռները (F-7), որոնք իրենց մարտավարատեխնիկական բնութագրերով էապես զիջում են ռուսականներին, հին են ու դժվար սպասարկվող, ապա ռուսական ձեռքբերումների արդյունավետությունն ու նշանակալիությունը զգալի կավելանա: Այս համատեքստում ռուսական ավիացիոն մատակարարումները ոչ միայն քանակական, այլև որակական առումով դարձան Իրանի օդուժի վերակառուցման առանցքային գործոն:

[1] Մինչև իսլամական հեղափոխությունը հանդիպում ենք աղբյուրների, որոնք նշում են 447 թիվը, սակայն այս թիվը ներառում է նաև ինքնաթիռներ, որոնք շահագործման ենթակա չէին:

Ուշագրավ ձեռքբերումներից են 3 «Կիլո» («վարշավյանկա») սուզանավերը, որոնք, ըստ ՌԴ նախագահ Բորիս Ելցինի, վաճառվել են առանց միջուկային բաղադրիչների, իսկ եղածը կարող էր ստուգվել ՄԱԳԱՏ-ի փորձագետների կողմից [U.S. National Archives and Records Administration. (2018, March 5). Memorandum of conversation with President Boris Yeltsin of Russia (Document No. 2016-156-doc10): Այս սուզանավերը օգտագործելու համար Իրանը անձնակազմեր էր ուղարկել Լատվիայում գտնվող ու Ռուսաստանի կողմից վերահսկվող ռազմածովային բազա վերապատրաստման նպատակով [Anthony H. Cordesman, 1994, 59]: 1991 թ. Իրան մատակարարվել են S-200VE զենիթահրթիռային համակարգեր ու դրանց համար նախատեսված ամբողջական լրակազմեր [Центр анализ мировой торговли оружием]: Սակայն այդ ձեռքբերումները զերծ չմնացին քաղաքական ու արտաքին ճնշումներից, որոնք հետագա տարիներին լուրջ խոչընդոտներ ստեղծեցին համագործակցության շարունակականության համար:

Խոչընդոտներ համագործակցության ճանապարհին: 1990-ական թթ. սկզբից ի վեր Ռուսաստանի ու Իրանի միջև ռազմական համագործակցության և համաձայնագրերի թեման լուրջ մտահոգության առարկա է եղել Միացյալ Նահանգների համար: Հենց այդ պատճառով էլ ԱՄՆ-ն մեծ ջանքեր է գործադրել՝ այս ոլորտում երկու երկրների միջև հետագա համագործակցությունը կանխելու համար: Ամերիկյան ճնշումները առավել համակարգված բնույթ ստացան նախագահ Բիլ Քլինթոնի վարչակազմի օրոք, երբ Պետդեպարտամենտի ու Պենտագոնի մակարդակով ձեռնարկվեցին քայլեր՝ սահմանափակելու Ռուսաստանի ռազմատեխնիկական համագործակցությունը Իրանի հետ: 1995 թ. հունիսի 30-ին Միացյալ Նահանգների ճնշման ներքո ստորագրվեց Գոր[1]-Չերնոմիրդինի[2] հուշագիրը, որի համաձայն՝ Մոսկվան պարտավորվեց չկնքել Իրանին սովորական զենքի մատակարարման նոր պայմանագրեր և ավարտել արդեն կնքված պայմանագրերի կատարումը մինչև 1999 թ. վերջը [Центр анализ мировой торговли оружием]: Հուշագրի ստորագրումից առաջ Ռուսաստանի պարտավորությունները Իրանի նկատմամբ հիմնված էին 1989, 1990 և 1991 թթ. կնքված չորս միջկառավարական համաձայնագրերի վրա [Садеги Э. Мир Мохаммад, Ирано-российское сотрудничество в сферах обороны и безопасности]: Սակայն, ինչպես երևում է ԱՄՆ պետդեպի գաղտնազերծված փաստաթղթերի ուսումնասիրություններից, հետագա մատակարարումները Իրանին հավանաբար շարունակվել են: Այդ փաստաթղթերից մեկում ԱՄՆ նախագահ Բիլլ Քլինթոնը Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին հետ զրույցում մտահոգություն է հայտնել իրենց ունեցած հետախուզական տվյալների մասին, ըստ որոնց՝ Ռուսաստանը շարունակում է Իրանին զինամթերք մատակարարել, մասնավորապես խոսքը վերաբերում է S-300 հակաօդային պաշտպանության հրթիռների ու «երկիր-երկիր» տեսակի միջին հեռավորության բալիստիկ հրթիռների մասին: Ի պատասխան սրան՝ Բորիս Ելցինը նշում է, որ նոր համաձայնագրեր Ռուսաստանը չունի Իրանի հետ և կատարում է այն պարտավորությունները, որը ստանձնել է 1987 ու 1989 թթ. պայմանագրերով, և բացի դրանից՝ Ռուսաստանը մատակարարում է ոչ թե ամբողջական հրթիռներ, այլ դրանց մասերը [Central Intelligence Agency (CIA). 2023, February 2. *[Declassified document)]*:

---

[1]Ալբերտ Առնոլդ Գոր Կրտսերը եղել է ԱՄՆ 45-րդ փոխնախագահը (1993-2001 թթ.) Բիլ Քլինթոնի վարչակազմում, Նոբելյան խաղաղության մրցանակի դափնեկիր (2007):

[2] 1993-1998 թթ. Վիկտոր Չեռնոմիրդինը եղել է ՌԴ կառավարության նախագահ:

The Issue of Iran-Russia Military-Technical Cooperation During the Presidency of Ali Akbar Hashemi Rafsanjani (1989–1997)

Իրան-Ռուսաստան ռազմատեխնիկական համագործակցության հարցը Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության շրջանում (1989-1997)

Փաստաթղթերի ուսումնասիրություններից կարելի է ենթադրել, որ զենքի հետագա փոխադրումներ ռուսական մասնավոր կազմակերպությունների կողմից եղել են: Սա էր պատճառը, որ 1997 թ. ստեղծվեց Վիզներ-Կոպտև մեխանիզմը[1]: Խնդիրը հատկապես վերաբերում էր Ռուսաստանի կողմից Իրանի հրթիռաշինության զարգացմանը նպաստող հավանական արտահանումներին, ինչպես նաև այս ուղղությամբ մասնագետների պատրաստումը [U.S. Department of State. (1998, January 19). Memorandum of conversation (Meeting with Primakov in Sweden, January 20 1998), Declassified document.], որոնք պարբերաբար հերքել են թե՛ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը [Central Intelligence Agency (1997, October 8). Memorandum of conversation with Russian Foreign Minister Primakov, Declassified document], թե՛ պաշտոնատար այլ անձինք [U.S. National Archives and Records Administration (2018, March 5). Summary Report on One-on-One Meeting Between Presidents Clinton and Yeltsin]: 1997 թ. սեպտեմբերին արևմտյան աղբյուրները նշում էին, որ Սամարայում գտնվող «Տռուդ ու Էներգոմաշ» գիտաարտադրական ընկերությունը Իրանին է փոխանցել RD-214 հթիռային շարժիչ, որն օգտագործվում է SS-4 տեսակի միջին հեռահարության բալիստիկ հրթիռի համար [Fred Wehling, Russian nuclear and missile exports to Iran]:

1996 թ. ԱՄՆ հատուկ ծառայությունները հայտնում են, որ «Ինոր» արտադրական ասոցիացիան պայմանագիր է կնքել՝ Իրանին մարտենզիոն պողպատ մատակարարելու համար, որը բարձր ամրության պողպատ է և օգտագործվում է հրթիռների պատրաստման համար: Հետագա հաղորդագրությունները պնդում էին, որ «Ինորը» Իրանին մատակարարել է 620 կգ հատուկ մետաղական համաձուլվածքներ և պաշտպանիչ փայլաթիթեղ: «Ինորի» նախագահ Լյուդմիլա Խրոմովան ու Իրանին հրթիռային նյութեր մատակարարելու մեջ մեղադրվող այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ ասել են, որ իրենց արտահանումը Իրան կատարվել է Ռուսաստանի կառավարության լիակատար իմացությամբ: Այնուամենայնիվ, «Ինորը», «Եվրոպալաս 2000»-ն ու «ՄՈՍՕ»-ն 1998 թ. հուլիսին հատուկ հետաքննության են ենթարկվել Ռուսաստանի արտահանման վերահսկողության օրենքների կասկածելի խախտումների համար: Նման արտադրանքներ են մատակարարվել նաև Մոսկվայում գտնվող «Պոլիուս» գիտահետազոտական ընկերության ու Ռոսվարուժենիե կազմակերպության կողմից: Երկու ընկերություններն էլ 1998 թ. հայտնվել են ԱՄՆ սանկցիաների տակ:

1997 թ. «Սանամ արդյունաբերության խմբի» (Իրանի բալիստիկ հրթիռների ծրագրի առաջատար կազմակերպություններից մեկն է) իրանցի ուսանողները, ըստ տեղեկությունների, հրթիռների նախագծման վերապատրաստում են անցել Սանկտ Պետերբուրգի Բալթյան պետական տեխնիկական համալսարանում և Բաումանի անվան Մոսկվայի պետական տեխնիկական համալսարանում: 1998 թ. ապրիլին հաղորդագրություններում նշվում էր, որ իրանցիները,

[1] Վիզներ-Կոպտևի մեխանիզմը դիվանագիտական շրջանակ էր, որը ստեղծվել է 1997 թ. հուլիսին ԱՄՆ-ի ու Ռուսաստանի միջև՝ ռուսական կառույցներից Իրանին հրթիռային տեխնոլոգիաների հնարավոր փոխանցման վերաբերյալ մտահոգությունները լուծելու համար: Այն ներառում էր կանոնավոր հանդիպումներ ԱՄՆ հատուկ բանագնաց Ֆրենկ Վիզների ու Ռուսաստանի տիեզերական գործակալության տնօրեն Յուրի Կոպտևի միջև՝ տեղեկատվություն փոխանակելու համար:

հնարավոր է, հրթիռային շարժիչի ու ուղղորդման տեխնոլոգիայի վերապատրաստում են անցել Մոսկվայի ավիացիոն ինստիտուտում: 1998 թ. հուլիսին Ռուսաստանի արտահանման վերահսկողության կառավարական հանձնաժողովը Բալթյան պետական տեխնիկական համալսարանը դրեց «հատուկ հետաքննության» տակ զանգվածային ոչնչացման զենքի ու հրթիռային համակարգերի հետ կապված կրկնակի օգտագործման ապրանքների արտահանմանը վերաբերող ռուսական օրենքների կասկածելի խախտումների համար: Բալթյան երկրներում իրանցի ուսանողների վերապատրաստումը դադարեցվեց նույն ամսին (1998 թ. հուլիս): Բալթյան պետական տեխնիկական համալսարանի ռեկտոր Յուրի Սավելևը հերքել է, որ իր հաստատությունը օգնել է իրանական հրթիռային ծրագրին՝ ասելով, որ իր համալսարանում սովորող 25 իրանցի ուսանող ստացել է միայն այն դասընթացները, որոնք ընդունված են եղել ընդհանուր ճարտարագիտական ծրագրով [Fred Wehling, Russian nuclear and missile exports to Iran]:

Ռամսֆելդը (նա նշանակվել էր Կոնգրեսի կողմից՝ Միացյալ Նահանգների համար բալիստիկ հրթիռների սպառնալիքը գնահատելու համար) հանձնաժողովի 1998 թ. հուլիսի զեկույցում եզրակացրել էր, որ Իրանի հրթիռային ծրագրերը «օգտվել են Ռուսաստանի լայն, էական, երկարաժամկետ օգնությունից», ինչն էլ «թույլ է տվել Իրանի հրթիռային ծրագրերին արագորեն առաջ շարժվել»: Զեկույցում հատուկ նշվում էր, որ RD-214 շարժիչի նախագծերի ու բաղադրիչների ձեռքբերումը Իրանին տալիս է «հիմնական, առաջադեմ հրթիռային բաղադրիչներ, որոնք կարող են համակցվել՝ Միացյալ Նահանգներին հարվածելու համար բավարար հեռահարությամբ բալիստիկ հրթիռներ արտադրելու համար» [The National Library of Australia, Executive summary of the report of the commission to assess the ballistic missile threat to the United States July 15, 1998]: Բացի դրանից՝ իսրայելական մամուլում հրապարակված հաղորդագրություններում ու մեկնաբանություններում նշվում էր, որ ռուսական տեխնոլոգիան ներառվել է 1998 թ. հուլիսին Իրանի կողմից փորձարկված «Շահաբ-3» հրթիռում: Սակայն իրանցի պաշտոնյաները հերքեցին, որ Ռուսաստանը համագործակցել է Իրանի հետ հրթիռի արտադրության գործում, իսկ Իրանի պաշտպանության նախարար Ալի Շամխանին նաև պնդեց, որ «Շահաբ-3» հրթիռը մշակվել է «առանց որևէ օտարերկրյա պետության օգնության»: Սակայն փորձագետների մեծ մասը համաձայն է, որ «Շահաբ-3» հրթիռը, ըստ էության, հյուսիսկորեական «Նոդոնգի» միջին հեռահարության բալիստիկ հրթիռ է՝ քիչ փոփոխությամբ»: Այնուամենայնիվ, մնում է հավանականությունը, որ ռուսական տեխնոլոգիան կամ գիտելիքները կարող են օգտագործվել՝ «Շահաբ-3» հրթիռի աշխատանքը բարելավելու կամ Իրանին որոշ բաղադրիչներ ներքին արտադրության հնարավորություն տալու համար [Fred Wehling, Russian nuclear and missile exports to Iran]:

Այսպիսով՝ բաց աղբյուրներից ստացված տեղեկություններից դժվար է հասկանալ իրականում Ռուսաստանից դեպի Իրան հրթիռային տարբեր սարքավորումների փոխանցումը եղել է պետական քաղաքականության հետևանք, թե մասնավոր ընկերությունների բիզնես, սակայն երկու պարագայում էլ փաստ է, որ այդ տեխնոլոգիաները հասել են Իրան, ինչը վկայում է Ռուսաստանի ու Իրանի միջև ձևավորված ոչ ֆորմալ փոխկախվածության մեխանիզմների գոյության մասին, և իրենց ազդեցություն են ունեցել իրանական հրթիռաշինության զարգացման մեջ:

The Issue of Iran-Russia Military-Technical Cooperation During the Presidency of Ali Akbar Hashemi Rafsanjani (1989–1997)

Իրան-Ռուսաստան ռազմատեխնիկական համագործակցության հարցը Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության շրջանում (1989-1997)

Եզրակացություններ: Ամփոփելով Իրան-Ռուսաստան ռազմատեխնիկական համագործակցությունը 1989-1997 թթ.՝ կարող ենք եզրակացնել, որ ընդհանուր առմամբ համագործակցության հիմքը անհամաչափ փոխկախվածությունն էր: Այս իմաստով փաստենք, որ իրան-իրաքյան պատերազմից հետո Իրանը ձգտում էր վերականգնել ռազմական հավասարակշռությունը հատկապես Իրաքի ու Սաուդյան Արաբիայի նկատմամբ: Իրանն այս շրջանում կախված էր ռուսական ռազմական մատակարարումներից, քանի որ Արևմուտքից նման հնարավորություններ չուներ, իսկ չինական ու կորեական ռազմական տեխնիկան ու սպառազինությունը որակապես զիջում էին ռուսականին և չէին կարող լիարժեք փոխարինել դրանց: Ռուսաստանը, որը տնտեսական ճգնաժամի մեջ էր գտնվում ԽՍՀՄ փլուզումից հետո, զենքի վաճառքը դիտարկում էր որպես կոշտ արժույթ ստանալու կարևոր աղբյուր: Զենքի արտահանումը օգնում էր պահպանել ռուսական ռազմարդյունաբերական համալիրի կենսունակությունը, որտեղ աշխատում էին հազարավոր մասնագետներ, իսկ Իրանը խոշոր գնորդ էր: Սա թույլ էր տալիս Ռուսաստանին հակակշռել ԱՄՆ գերիշխանությունը Մերձավոր Արևելքում ու Կովկասում, ինչպես նաև ապահովել ազդեցություն Իրանի վրա:

Ասվածը դիտարկելով կոնստրուկտիվիզմի շրջանակում՝ կարող ենք ասել, որ Իրանի համար ռուսական զենքի ձեռքբերումը ոչ միայն նյութական ռեսուրս էր, այլև ինքնության քաղաքականություն՝ ցույց տալ Արևմուտքի մեկուսացման պայմաններում այլընտրանքային գործընկեր ունենալու կարողությունը: Իրանի ներսում ռուսական զենքի ներմուծումը ներկայացվում էր որպես ազգային անկախության ու միջազգային մեկուսացման հաղթահարման խորհրդանիշ, իսկ Ռուսաստանի համար՝ որպես «մեծ տերության» ժառանգության շարունակություն: Համագործակցության մեջ առանձնահատուկ դեր ուներ նաև ռուսական փոխանցումների «մոխրագույն գոտին»: Չնայած պաշտոնական պայմանագրերը սահմանափակվում էին ԱՄՆ ճնշումների պատճառով, տեխնոլոգիաներն ու սպառազինության որոշ բաղադրիչներ հասնում էին Իրան ոչ օրինական ուղիներով ու մասնավոր ընկերությունների միջոցով: Այս մոխրագույն մեխանիզմը, մի կողմից, ապահովում էր Իրանին անհրաժեշտ տեխնոլոգիաներ, մյուս կողմից թույլ էր տալիս Մոսկվային պահպանել մերժման հնարավորություն՝ չընդունելով դա որպես պաշտոնական պետական քաղաքականություն:

Հաշեմի Ռաֆսանջանին՝ որպես պրագմատիկ քաղաքական ու պետական գործիչ, չնայած նախկին հակասություններին, գնաց Ռուսաստանի հետ փոխշահավետ համագործակցության՝ ներքաղաքական շրջանակներին դա ներկայացնելով որպես Իրանի անվտանգության ապահովման ու պետության անկախության ու հեղինակության ամրապնդման կարևոր միջոց:

Այսպիսով՝ անհամաչափ կախվածությամբ այս համագործակցությունը նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում ստեղծեց հիմքեր հետագա զարգացման համար և հետագայում վերածվեց երկարաժամկետ ռազմավարական գործընկերության:

References

1. Irani Islamakan Hanrapetut'yan Sahmanadrut'yun, pashtonakan t'argmanut'yun, https://missionarmenia.org/wp-content/uploads/2023/04/Iran_constitution_9_arm.pdf:
2. KHV gaghtnazertsvats p'astat'ught', https://www.cia.gov/readingroom/docs/DOC_0000602680.pdf:
3. AMN petdepi gaghtnazertsvats p'astat'ght'er, 2023, https://docs.rferl.org/hy-am/2023/02/02/08550000-0a00-0242-326a-08db055c3133.pdf:
4. AMN petdepi gaghtnazertsvats p'astat'ght'er, 2023, https://docs.rferl.org/hy-am/2023/02/02/08550000-0a00-0242-9da8-08db055c2589.pdf:
5. AMN petdepi gaghtnazertsvats p'astat'ght'er, 2023, https://docs.rferl.org/hy-am/2023/02/02/08550000-0a00-0242-a799-08db055c3054.pdf:
6. The National Archives and Records Administration (NARA), գաղտնազերծված փաստաթուղթ, https://www.archives.gov/files/declassification/iscap/pdf/2016-156-doc-10.pdf:
7. Clinton Presidential Library, Summary Report on One-on-One Meeting between Presidents Clinton and Yeltsin, May 10, 1995, https://www.archives.gov/files/declassification/iscap/pdf/2016-156-doc-11.pdf:
8. **Makhdiyan Mokhammad Khasan**, Istoriya mezhgosudarstvennykh otnosheniy Irana i Rossii (XIX – nachalo XX veka), Moskva, 2014.
9. **Minasyan S. M.,** Istoriya i perspektivy rossiysko-iranskogo voyenno-politicheskogo sotrudnichestva, https://arar.sci.am/Content/38552/file_0.pdf.
10. Tsentr analiza mirovoy torgovli oruzhiyem, Analiticheskiy otchet, https://armstrade.org/files/analytics/344.pdf.
11. **Sadegi E. Mir Mokhammad**, Irano-rossiyskoye sotrudnichestvo v sferakh oborony i bezopasnosti https://cyberleninka.ru/article/n/irano-rossiyskoe-sotrudnichestvo-v-sferah-oborony-i-bezopasnosti.
12. Soviet Reaction to Khomeini's Death, Wikileaks Cable 89MOSCOW15118, https://wikileaks.org/plusd/cables/89MOSCOW15118_a.html.
13. **Hunter, Shireen T.,** Iran's Foreign Policy in the Post-Soviet Era: Resisting the New International Order, Santa Barbara, Praeger, 2010.
14. Moslem, Mehdi, Factional Politics in Post-Khomeini Iran, Syracuse University Press, 2002.
15. **Arjomand, Said Amir, After Khomeini**: Iran under His Successors, Oxford University Press, 2009.
16. Randjbar-Daemi, Siavush, Intra-State Relations in the Islamic Republic of Iran: The Presidency and the Struggle for Political Authority, Routledge, 2018.
17. **Cordesman, Anthony H.,** Iran's Military Forces: 1988-1993, Washington D.C., CSIS, 1994.
18. SIPRI Arms Transfers Database, Stockholm International Peace Research Institute, https://armstransfers.sipri.org.
19. Executive Summary of the Report of the Commission to Assess the Ballistic Missile Threat to the United States, July 15, 1998, https://permanent.fdlp.gov/lps1200/BMThreat.html.
20. Wehling, Fred, Russian Nuclear and Missile Exports to Iran, The Nonproliferation Review, 1999, https://www.tandfonline.com/doi/epdf/10.1080/10736709908436756.

جعفرشیر، علی‌نیا، روایتی از زندگی و زمانه آیت‌الله اکبر هاشمی رفسنجانی (۱۳۱۳-۱۳۹۴)، تهران، ۱۳۹۵

http://tarikhirani.ir/fa/news/5749/ انی در زمان بدی بود، تاریخ ایرانی